ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

   Աննա Չուլյան, «Հայաստանի ազգային գրադրաան» ՊՈԱԿ-ի տնօրեն

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն, Հունիսի 14-16, 2026 թ.

3. **Հրավիրող կողմը.**

   «Եվրոպայի ազգային գրադարանների համաժողով» (CENL)

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   Մասնակցություն Եվրոպայի ազգային գրադարանների համաժողովի տնօրենների տարեկան ընդհանուր ժողովին

5. **Քննարկված թեմաները.**

   CENL-ի տարեկան ընդհանուր ժողովի ընթացքում անցկացվել են մի շարք հանդիպումներ և մասնագիտական քննարկումներ, որոնք միավորված էին «Ապագան հիշատակելով» գլխավոր թեմայի շուրջ:
   Հիմնական քննարկված թեմաներն էին՝

   - ազգային գրադարանների դերը Եվրոպայի մշակութային ժառանգության պահպանության գործում,
   - Europeana-ն և տվյալների ընդհանուր տարածքը. ազգային գրադարանների ռազմավարական զարգացման նոր հնարավորությունները,
   - մշակութային ժառանգության հաստատությունների անվտանգությունն ու պաշտպանությունը,
   - պատումի հեղինակությունն ու պատմության ներկայացումը տարբեր մեդիա հարթակներով,
   - լեզվական բազմազանություն և մշակութային ժառանգություն արհեստական բանականությանը պատրաստ Եվրոպայի համար:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

   Համաժողովի շրջանակում հանդես եմ եկել «Ոգեկոչելով ապագան. ազգային լեզվի պահպանումը մետատվյալների համակցման միջոցով (Հայաստանի փորձը համաշխարհային մատենագիտական համակարգերում)» թեմայով ելույթով:
   CENL «AI in Libraries» խմբի աշխատանքների շրջանակում քննարկվել են ազգային գրադարաններում արհեստական բանականության (ԱԲ) կիրառման

էթիկական սկզբունքներ սահմանող ուղեցույցը (Ethical Charter on the use of artificial intelligence in national libraries):
Հանդիպումների ընթացքում ներկայացվել և քննարկվել են ազգային գրադարանների առաքելության, ԱԲ տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունների և դրանցից բխող էթիկական, իրավական ու մասնագիտական մարտահրավերների վերաբերյալ տեսակետներ և առաջարկություններ:
Առանձին հանդիպումներ են տեղի ունեցել մի շարք ազգային գրադարանների տնօրենների հետ, մասնավորապես.

- Ֆրանսիայի ազգային գրադարանի նապագահ Ժիլ Պեկուի հետ քննարկվել են համատեղ՝ ընթացիկ և նախատեսվող ծրագրերը:
- Լիտվայի ազգային գրադարանի տնօրեն Աուշրինե Ժիլինսկիենեի և Բուլղարիայի ազգային գրադարանի տնօրեն Կալինա Իվանովայի հետ քննարկվել են ս/թ հոկտեմբերին կայանալիք «Ժառանգության պահպանություն՝ հանուն կայուն ապագայի» միջազգային գիտաժողովի մասնակցությանը վերաբերող հարցերը:
- "Europeana" հիմնադրամի տնօրեն Հարի Վերվեյենի հետ քննարկվել են հայկական՝ որպես բացառիկ լեզվի տպագիր ժառանգության ընդգրկման հնարավորությունները "Europeana" հարթակում:
- Ֆրանսիայի ազգային գրադարանի տնօրեն Ժիլ Պեկուի, Թվային Ֆրանկոֆոն ցանցի (RFN) գլխավոր քարտուղար Ֆրեդերիկ Լեմմերսի և Լյուքսեմբուրգի ազգային գրադարանի տնօրեն Կլոդ Դ. Կոնտերի հետ քննարկվել են 2027 թվականի RFN-ի տարեկան ընդհանուր ժողովի, ինչպես նաև «Ֆրանսիա-Հայաստան. պատմական եվ մշակութային երկխոսություն» միջազգային գիտաժողովի կազմակերպման և անցկացման հարցերը:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Ներկայացվել է «Արհեստական բանականության կիրառման էթիկական ուղեցույցը ազգային գրադարաններում» (CENL Ethical Charter for ԱԲ) փաստաթղթի նախագիծը՝ հետագա հաստատման համար:
Պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ ազգային գրադարանները արհեստական բանականության կիրառման ընթացքում առաջնորդվեն թափանցիկության, հաշվետվողականության, մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության, հեղինակային իրավունքի պահպանման, բազմազանության և ժողովրդավարական արժեքների սկզբունքներով:

Ընդգծվել է արհեստական բանականության համակարգերի կիրառման ժամանակ ռիսկերի գնահատման, մարդկային վերահսկողության, արդյունքների մշտադիտարկման անհրաժեշտությունը:
Կարևորվել է ազգային գրադարանների, գիտական հաստատությունների և տեխնոլոգիական կազմակերպությունների միջև համագործակցության զարգացումը՝ էթիկական և պատասխանատու լուծումների համատեղ մշակման նպատակով:
Առաջարկվել է ուղեցույցի դրույթները հետագայում վերածել տեղական քաղաքականությունների, աշխատակազմի ուղեցույցների և արհեստական բանականության կիրառման գործնական կանոնների:
Ստորագրված վերջնական փաստաթուղթ չի ներկայացվել. ուղեցույցը գտնվում է քննարկման և համաձայնեցման փուլում:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

CENL անդամ ազգային գրադարաններում ձևավորվում է ԱԲ տեխնոլոգիաների կիրառման նկատմամբ միասնական, պատասխանատու և արժեքահեն մոտեցում, որը նպաստում է վստահելի գիտելիքային միջավայրերի պահպանմանը, մշակութային ժառանգության պաշտպանությանը և գրադարանների առաքելության արդյունավետ իրականացմանը:
Քննարկվել է մշակել ազգային մակարդակում ԱԲ կիրառման ներքին քաղաքականություններ և ուղեցույցներ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Զուլյան Աննա՝

18.06.2026 թ.